

Կլիմայի փոփոխության դեմ պայքար



Մշակող՝ Անիս Ամուրի Հաստատություն՝ Թայբե Միլիի միջնակարգ դպրոց, Սֆաքս, Թունիս

Ներածություն

Այս դասապլանի նպատակն է աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել կլիմայի փոփոխության խնդրին վերաբերող ամսագրի ստեղծմանը՝ խորությամբ ուսումնասիրելով կլիմայի փոփոխության խնդիրները և գտնելով գործնական լուծումներ:

Նպատակներ

Աշակերտները

- կուսումնասիրեն կլիմայական փոփոխության հետ կապված հիմնական գաղափարները,
- կտարբերակեն կլիմայական փոփոխության վտանգները շրջակա միջավայրի տեսանկյունից,
- կսահմանեն կլիմայի փոփոխության որոշ պատճառներ, հետևանքներ և հնարավոր գործնական լուծումներ:

Պահանջվող ժամանակ/ տևողություն

- **Դասարանային աշխատանք 1.** 30 րոպե թեմայի ներածություն և աշակերտների հետ մտքերի փոխանակում:
- **Տնային առաջադրանք 1.** 90 րոպե աշակերտներն ուսումնասիրում և լրացնում են գործողությունների աշխատանքային թերթիկը Microsoft Teams-ի միջոցով:
- **Դասարանային աշխատանք 2.** 30 րոպե քննարկում փոքր խմբերում նախորդ թեմաների վերաբերյալ:
- **Տնային առաջադրանք 2.** 90 րոպե աշակերտները հոդվածներ են գրում ամսագրերի համար:
- **Դասարանային աշխատանք 3.** 60 րոպե ամսագրերը տպագրվում և բաժանվում են:

Անհրաժեշտ ռեսուրսներ

- Համակարգիչներ և բջջային հեռախոսներ
- Microsoft Teams, քվեարկության գործիք: Tricider կամ Mentimeter, Madmag app և տպիչ, «Թիմային գործողությունների պլան» աշխատանքային թերթիկ:



Գործողություններ

Դասարանային աշխատանք



- Ուսուցիչը ներկայացնում է կլիմայական փոփոխությանն առնչվող թեման:
- Ուսուցիչն աշակերտներին բաժանում է երեք խմբի. յուրաքանչյուր խումբ կուսումնասիրի տարբեր թեմաներ:

Թեմա 1: Կլիմայի փոփոխության սահմանումը

Թեմա 2: Կլիմայի փոփոխության պատճառները

Թեմա 3: Կլիմայի փոփոխության հետևանքները

Թեմա 4: Կլիմայի փոփոխության հետ կապված տեղական խնդիրների համար հարկավոր լուծումները

- Թիմերը կարճ քննարկում են, թե ինչպես կազմակերպել աշխատանքը, այնուհետև ուսուցիչն ուղորդում է խմբին մտքերի փոխանակման գործընթացում: Ուսուցիչը յուրաքանչյուր աշակերտի տրամադրում է «Թիմի գործողությունների պլան» աշխատանքային թերթիկը տնային առաջադրանքի համար:

Խմբային առաջադրանք



- Աշակերտներն աշխատում են խմբերով տնից՝ օգտագործելով Microsoft Teams-ը: Առաջարկներ աշակերտների համար.
 - յուրաքանչյուր խմբից պահանջվում է ուսումնասիրել միայն իրենց առաջադրանքին վերաբերող տեղեկատվությունը,
 - պահանջվում է ճշգրիտ տեղեկատվության և աղբյուրների հղումների հավաքագրում, ինչպիսիք են՝ ամսաթվերը, թվերը, վայրերը և օրենքները,
 - լուսանկարների և վիդեոալիների ընտրությունը շատ կարևոր է: Այն պետք է ուղիղ կապ ունենա առաջադրանքի հետ:

Դասարանային աշխատանք



- Ուսուցիչը պարզեցնում է քննարկումը յուրաքանչյուր խմբի բացահայտումների վերաբերյալ:
- Աշակերտները ներկայացնում են իրենց բացահայտումները:
- Ուսուցիչը վարում է մի ամբողջ խմբային բանավեճ հավաքագրված տեղեկատվության վերաբերյալ՝ ընտրելու ամսագրի լուսանկարներ և ընդհանուր դիզայն:
- Աշակերտները քվեարկում են նախընտրելի նկարի համար՝ օգտագործելով Tricider կամ Mentimeter:

Խմբային առաջադրանք

2

Յուրաքանչյուր խումբ ամսագրի համար հողված է գրում հիմնվելով սեփական բացահայտումների վրա:

- Առաջարկներ աշակերտների համար. տեղեկություն հավաքելը բավարար չէ, այն պետք է նաև ուսումնասիրել: Հնարավոր է ընթացիկ հարցերի առաջացում, ինչպեսիք են
 - Արդյո՞ք այն հուսալի է: Ինչո՞ւ: Ո՞ւմ համար:
 - Ձեր տվյալները ճի՞շտ են: Ինչպե՞ս կարելի է այն մեկնաբանել տարբեր տեսանկյուններից:
 - Հողվածը գրելուց հետո այն պետք է խմբագրել, ստուգել ուղղագրական սխալները, շարահյուսությունը և ոչ ճիշտ արտահայտությունները:

Դասարանային աշխատանք

3

- Ամսագիրը պետք է վերջնական տեսքի բերել և ներկայացնել: Ամսագրի օրինակները բաժանել դպրոցում այլ աշակերտների և ծնողների համար կլիմայի փոփոխության և մեր՝ որպես քաղաքացիների, դերի մասին տեղեկություն հաղորդելու նպատակով:

Փոփոխություններ կամ հետագա ընթացանության առաջարկներ

Այս հետազոտական և գեղարվեստական փորձը կարելի է փոխանցել այլ դպրոցների աշակերտներին: Ավելին, այս գործունեությունը կարող է լինել թվային ամսագրի սկիզբը, որի պատասխանատուները կլինեն աշակերտները: Հույս կա, որ ամսագիրը կտարածվի քաղաքի դպրոցներում, և որ այլ հաստատությունների աշակերտները կարող են մասնակցել գործընթացին:

Հղումներ

Take Part - Climate Change

<https://www.takepart.com/flashcards/what-is-climate-change/index.html>

UN - Climate Change

<https://www.un.org/en/sections/issues-depth/climate-change/>

Acciona - Climate Change

<https://www.acciona.com/climate-change>

<https://www.climatechangenews.com/>

<https://www.wwf.org.uk/effectsofclimatechange>

https://ec.europa.eu/clima/change/consequences_en

<https://madmagz.com>

<https://interestingengineering.com/10-ways-you-can-help-reduce-the-climate-change>

Այս դասապլանն ընտրվել է 2019 թվականի Էկո-Դպրոցներ ծրագրի շրջանակներում, որում ուսուցիչները հրավիրվել էին մշակելու և ներկայացնելու Կայուն զարգացման նպատակների (ԿՀՆ) վերաբերյալ գործողությունների մանկավարժական խթանելով դասապլաններ:

Թիմային գործողությունների ծրագիր

Թիմ

Թիմի ղեկավար

Ամսաթիվ

Մասնակիցներ

Առաջադրանքներ	Վերջնա- ժամկետ	Ռեսուրսներ	Հաղորդակցման գործիքներ	Նշումներ/ մեկնաբանություններ

Ստուգվել և հաստատվել է՝

Թիմային գործողությունների ծրագրի օրինակ

Թիմ

Թիմի ղեկավար՝ X աշակերտ

Ամսաթիվ

Մասնակիցներ՝ աշակերտներ Y, W և Z.

Առաջադրանքներ	Վերջնա-ժամկետ	Ռեսուրսներ	Հաղորդակցման գործիքներ	Նշումներ/ մեկնաբանություններ
<p>Կլիմայական փոփոխությունների պատճառների վերբերյալ հետազոտություն:</p> <p>Առաջադրանքի հետ կապված լուսանկարների հավաքագրում:</p>	Ապրիլ 25, 2025	<p>Համացանց</p> <p>Հանրային գրադարան</p>	<p>Microsoft Teams</p> <p>Facebook Խումբ</p> <p>Messenger</p>	<p>Արդյունաբերական հեղափոխությունից ի վեր մարդկությունն անմիջականորեն</p> <p>Վերջին 50 տարիների գլոբալ տաքացումը 95% հավանականությամբ մարդկային գործողությունների հետևանք է:</p>

Ստուգվել և հաստատվել է՝